



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

N 22
15 հունիսի 2011թ.
ք. Եղվարդ






ԵՐԵՎԱՆՅԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ՄԱՍՆԱԿԻ
ԾԱՌԱՐԱՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45 հոդվածի 2-րդ մասի 1-րդ կետի, հիմք ընդունելով Եղվարդի համայնքի Երևանյան թաղամասի բազմաթիվ բնակիչների գանգատները, թաղամասի ծառերի վրա վտանգավոր չորացած ճյուղերի առկայությունը, որոնք վտանգ են ներկայացնում անցորդների, կայանվող ավտոմեքենաների համար, ինչպես նաև բազմամյա ծառերի կենսունակության բարձրացման անհրաժեշտությունը՝

ԵՂՎԱՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Եղվարդ համայնքի Երևանյան թաղամասում իրականացնել բազմամյա ծառերի մասնակի հատման աշխատանքներ:
2. Ծառերի հատման արդյունքում առաջացած վառելափայտը հատկացնել համայնքի զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով առավել կարիքավոր ընտանիքներին:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին կազմակերպել ծառահատման և բնափայտի բաշխման աշխատանքները:

Եղվարդի քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝

<u>ԿՈՂՄ</u>	<u>ԴԵՄ</u>	<u>ՁԵՌՆՊԱՀ</u>	
 /ստորագրություն/	_____	_____	Վ. Ամիրխանյան
 /ստորագրություն/	_____	_____	Գ. Գևորգյան
 /ստորագրություն/	_____	_____	Վ. Գևորգյան
 /ստորագրություն/	_____	_____	Ռ. Զոհրաբյան
 /ստորագրություն/	_____	_____	Հ. Հովհաննիսյան


/ստորագրություն/


/ստորագրություն/


/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

/ստորագրություն/

Վ. Մարտիրոսյան

Է. Նիկոլյան

Ա. Սարգսյան



Հանայնքի ղեկավար Ն. Սարգսյան